21.08.2020թ.

ք. Երևան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 433112/15

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, քննելով 21.08.2020թ. թիվ 29663 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների «ՆՅՈՒ ՀՈՐԻԶՈՆ ԳՐՈՒՊ» ԻՆԿ. ԸՆԿ. ՀԱՅ. ՄԱՍ-ի տնօրեն Անդրանիկ Բաղդասարյանը (ՀՎՀՀ՝ 00930386, հասցե՝ ՀՀ ք.Երևան, Թոթովենց 10/1 56) ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի վճարել ընկերության հարկերը, որի հետևանքով ընկերության պարտավորությունները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ առ 26.06.2020թ-ի դրությամբ կազմում են 1.535.099 դրամ, որից 1.532.647 դրամը առաջացել է 2020թ-ի մայիս ամսվա եկամտային հարկի հաշվարկից, որի համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170^3 հոդվածով:

Կողմը ծանուցված լինելով արձանագրության կազմման, գործի քննության վայրի և ժամանակի մասին, չի ներկայացրել առարկություն կամ բացատրություն:

Այն փաստը, որ Անդրանիկ Բաղդասարյանի կողմից իրավախախտումը վերջին մեկ տարվա ընթացքում կատարվել է առաջին անգամ, սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170^3 հոդվածով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 33, 244^2, 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170^3 հոդվածի, Անդրանիկ Բաղդասարյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 10.000 (տասը հազար) դրամի չափով:

ՀՀ ՊԵԿ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն.Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝ Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40): Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն հանձնելու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում: Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին. 900005240487՝ վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը: Տուգանք ընշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած պնձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստացա որոշման պատճենը_____